\

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

<<Ստեփանավանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ կարիքների համար «ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման

նիստի

ք. Ստեփանավան 26 հունվարի 2018թ., ժամը $17^{00}$

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 26.01.2018թ. ժամը 17:00-ին /գնահատումը կատարվել է էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով/:

Մասնակցում էին`

Հանձնաժողովի նախագահ` Ն. Ղուկասյան - <<Ստեփանավանի ԲԿ>> ՓԲԸ գլխավոր հաշվապահ /ներկայացված հայտերը գնահատող/

Անդամներ` Ի. Պետրոսյան- <<Ստեփանավանի ԲԿ>> ՓԲԸ բուժ. գծով տեղակալ /ներկայացված հայտերը գնահատող/

Վ. Գրիգորյան - <<Ստեփանավանի ԲԿ>> ՓԲԸ ճարտարագետ /ներկայացված հայտերը գնահատող/

Հ. Սարգսյան -<<Ստեփանավանի ԲԿ>> ՓԲԸ դեղագետ / ներկայացված հայտերը բացող/

Ա. Սահակյան -<<Ստեփանավանի ԲԿ>> ՓԲԸ գանձապահ / ներկայացված հայտերը բացող/

Հանձնաժողովի քարտուղար-գնումների համակարգող` -Տ. Ջիլավյան – <<Ստեփանավանի ԲԿ>> ՓԲԸ տնտեսագետ

## *1. Տեղեկություններ հայտերի բացման մասին*

Հայտերը բացվել են էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով` հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 17:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

Ընդունվել է որոշում` կողմ – 5, դեմ – 0

## *2. Տեղեկություններ հայտեր ներկայացրած մասնակիցների անունների և գտնվելու վայրի հասցեների մասին*

Հայտերը բացվել են 26.01.2018թ. ժամը 17:00-ին «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի վարչական շենքում, /ք. Ստեփանավան, Սուրբ Վարդանի 1 / տնտեսագետի աշխատասենյակում:

<<Ստեփանավանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ կարիքների համար «ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ--18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| N | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը |
|---|---|---|
| 1 | <<Շին>> ՍՊԸ | ք. Տաշիր, Գետափնյա 45 |
| 2 | ԱՁ Գրիգոր Բաբայան | ք. Բյուրեղավան, Զ. Անդրանիկի 32/48 |
| 3 | <<Սեգ>> ՍՊԸ | ք. Երևան, Սարկավագի 72/2, բն18 |
| 4 | <<Էլմարկետ>>ՍՊԸ | ք. Երևան, Աճառյան 33/4 |

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

3. *Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին*

Մասնակիցների կողմից փաստաթղթերը ներկայացված են սահմանված պահանջներին համապատասխան, <<Էլմարկետ>> ՍՊԸ-ից պահանջվել է հավելված 2.1 շտկում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

4. *Մասնակիցների առաջարկած գինը՝*

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

| N | Գնման առարկայի անվանումը | Չափման միավորը | Քանակը | Առաջարկված գինն առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | <<Շին>> ՍՊԸ | ԱՁ Գրիգոր Բաբայան | <<Սեգ>> ՍՊԸ | <<Էլմարկետ>> ՍՊԸ | | | |
| 1 | Դյուրակիր համակարգիչ /նոութբուք /notebooks// | հատ | 1 | 450000 | 393000 | 438000 | 225000 | | | |

ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/4 ծածկագրով մրցույթն իրականացվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

5. *<<Գնումների մասին>> ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.*

1.«ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնման ընթացակարգի 1 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Էլմարկետ>>ՍՊԸ-ին:

2. Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը և հավելված 2.1 շտկումը:

3. ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման>> թիվ 526-Ն կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված տվյալների ճշտման /հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ հարցում կատարել ՀՀ Կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ Ashkhen Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine Ghahramanyan@ taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

6. *Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը հաստատելու մասին*

«ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ--18/4 ծածկագրով ընթացակարգի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման և ՀՀ ԿԱ ՊԵԿ –ի կողմից եզրակացության ներկայացման օրվանից հետո

Ստեփանավանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի շենքում, /ք. Ստեփանավան, Սուրբ Վարդանի 1 /
տնտեսագետի աշխատասենյակում:

Գնահատող հանձնաժողովի

Նախագահ՝ ______________ Ն. Ղուկասյան

Հանձնաժողովի անդամներ՝ ______________ Ի. Պետրոսյան

______________ Վ. Գրիգորյան

______________ Հ. Սարգսյան

______________ Ա. Սահակյան

Քարտուղար ______________ Տ. Ջիլավյան